և հիացմունքը պատկանել են Շիլլերի «Աւազակներին», այն երիտասարդութեան, որը չափազանցութիւնների մէջ տեսնում է իւր ոյժը, մեծախօս ֆրազների մէջ՝ ոգևորութեան լեղուն, իսկ ամբողջի վերայ իշխող շունչը՝ իւր սեպհական էութեան մի մասը։

Ա. Ա.

---

## ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ.—«ԼԱԼՕ». *Թիւրքա-հայերի կեանքից. Թիֆլիս. տպարան «Արօր» Տ. Նազարեանցի։ 1890 թ., փոքր քառածալ, 28 երես. գինն է 5 կոպէկ։*

Ժողովրդական ընթերցանութեան համար մի շարք հրատարակելիք էժանագին գրքերից այս մաքուր հրատարակւած գրքոյկը առաջինն է։ «Լալօն» պարզ և հետաքրքրական լեզուով պատմւած մի փոքրիկ պատկեր է Թիւրքա-հայերի կեանքից։ Գործողութիւնը կատարւում է Վան քաղաքում։ Թէն բոլոր գործող անձինք՝ հարկահան Սրգօն, Կարապետ աղան և Աւտօն (Լալօ) հայեր են, սակայն այդ տեսակ բնաւորութիւնների գոյութիւնը սերտ կապւած է Ցաճկաստանում իշխող կարգ ու կանոնների հետ։ Ամեն երկրում կան վատ հարկահաններ, անգութ վաշխառուներ և անպաշտպան, հլու հարստահարւածներ. բայց Սրգօներ, Կարապետ աղաներ և Լալօներ կարող են գոյութիւն ունենալ միմիայն Ցաճկաստանում։

Ժողովրդի ընթերցանութեան համար «Լալօն» ցանկալի գիրք է, միայն պէտք էր, մեր կարծիքով, աւելի շեշտել նորա վերայ, որ Թիւրքա-հայերի կեանքի այդ երևոյթները կը լինին, մինչև որ գոյութիւն ունենան նոցա ստեղծող պայմանները։ Քարոզներով ոչ Սրգօներ և Կարապետ աղաներ կ'ուղղւեն, ոչ էլ Աւտօններ կը պակասեն. մինչև որ Ցաճկաստանում կը տեսնենք ներկայ կարգ ու կանոնները՝ վերջ էլ չի լինի Սրգօների և Կարապետների պէս հարստահարիչների։ Նեխւած ճահիճներում վարդեր չեն բուսնում։

Լ. Ս.

---

## ՔԱԼԱՆԹԱՐ, ԱՆՈՒՇԱՒԱՆ.—«ՖԻԼՕԿՍԵՐԱ ԵՒ ՆՈՐԱ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ»։ *Արտատպած «Մշակ» լրագրից։ Թիֆլիս, տպարան Կովկասի կառավարչապետի կանցելիարի։ Փոքր քառածալ, 15 երես, տառ № 10, գինն է 2 կոպէկ։* [1])

Այս փոքրիկ բրոշիւրը, տպւած 1.200 օրինակով, գրւած է յատկապէս հայերէն լեզուով, Ֆիլոկսերային կոմիտեի առաջարկութեամբ, որը աշխատում է տեղական աղգաբնակութեան մէջ ճիշդ դաղափար-

---

[1]) Գինը չի յայտարարւած, բայց յայտնւած է «Մուրճ»-ի խմբագրութեան։

ներ տարածել ֆիլոկսերայի մասին։ Եթէ ֆիլոկսերայի գէմը չ՚առնուի, կարճ միջոցում մի երկրի գրեթէ ամբողջ այգեգործութիւնը, վազապահութիւնը կը ջնջուի։ Բրոշիւրի յատուկ նպատակն է՝ տարածել ժողովրդի մէջ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան հետեւեալ առաջարկութիւնները՝ „1—Եւրոպայից, Ղրիմից և այլ վարակուած տեղերից, ինչպիսիներն են Սուխումի բաժինը և Քութայիսի նահանգը, այլ ևս չը բերել մեր կողմերը վազեր, պատուաստներ և զանազան արմտիք։ (Մեր կողմերը ասելով, հեղինակը ուզում է ասել՝ Շամախու, Գանձակի, Դերբենդի, Երևանի և Նախիջևանի կողմերը, ուր ֆիլոկսերա դեռ ևս չի երևացել)։ 2—Խիստ հետևել և հսկել, որ դաղանի կերպով չ՚անցկացնեն վազեր և առհասարակ բոյսեր։ 3—Առանձին հոգատարութիւն դարձնել այն այգիների վերայ, որտեղ Եւրոպայից և այլ վարակուած տեղերից վազեր կամ բոյսեր են ստացուած. իսկ այդ տեսակ այգիների մասին Գիւղատնտեսական Ընկերութիւնը յատուկ խնդրում է, որ հաղորդեն թէ՝ ե՞րբ և ո՞ր տեղերից ի՞նչ տեսակ վազեր են բերուած և թէ արդեօք այդ այգիներում փոփոխութիւն չէ՞ նկատուում, կամ եթէ ֆիլոկսերայի վարակման արտաքին նշանները (օրինակ, տերևների դեղնելը, կարճանալը և կենդրոն կազմելը) նկատուն՝ իսկոյն իմացուցան տեղական գաւառապետին և Գիւղատնտեսական Ընկերութեան, որ դորա դէմ իսկոյն միջոցներ ձեռք առնեն։ Եթէ հիւանդութիւնը դեռ նոր է սկսած և փոքր տարածութեան վերայ է, առաջն առնելը այնքան դժուար չէ և տէրութիւնը լանձն է առնում“,

Ա. Ա.

---

## ՆՈՐ ՍՏԱՑԻԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) *Հաչիւ Բագուայ Հայոց ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ վասն 1889 ամի։ Բագու, տպ. Ս. Տէր-Յովհաննիսեանի, 1890 թ.։*

2) Положеніе о состоящ. подъ покров. Его Имп. Выс. Гос. Наслѣдника Цесаревича, Казанской Научно-Промышленной выставкѣ, 1890 г. произведеній Волжско-Камскаго края и Востока Россіи, утвержденное г. Министромъ Финансовъ 30-го мая 1889 г. Казань. тип. А. Родіанова, 1890 г.

3) Программа историко-этногр. отдѣла Казанской Научно-Промышл. выставки, 1889 г.

4) Программа фабрично-заводскаго отдѣла Казанской Научно-Промышл. выставки 1880 г. Казань. тип. Казанск. Биржев. Листка, 1890 г.

5) Программа кустарнаго отдѣла Казанской Научно-Промышл. выст. 1890 г. Казань, 1889 г., типогр. Казанск. Бирж. Листка.

6) *Երկամեայ տեղեկագիր Իզմիրի Ազգային Տնտեսական խորհրդոյ 1887—1889 թ.։ Իզմիր, 1890 թ., տպարան Մամուրեանի։*

7) *Բագուայ Հայոց Մարդասիրական Ընկերութեան տարեկան հաչիւը 1889 թ.։ Բագու 1890 թ.։*

---